

## ՄԱՍՆԸ ԱՍՈՒԼԻՍ

### ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ Ե ՀԱՎԵԼՈՒՄՈՎ»

Հունվարի 16-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպումներ ունեցավ վրացական եւ օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ եւ պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին:



ՄԵՐ ԿՈՒՐՍԸ ՄՆՈՒՄ Ե ԱՆՓՈՓՈՒՄ ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ ԵՎ ՆԱՏՕ

Վարչապետը լրագրողների հետ հանդիպմանը կրկին ընդգծեց Վրաստանի արտաքին քաղաքական կուրսի անփոփոխությունը: Նրա խոսքերով, 2014 թվականին Վրաստանը ՆԱՏՕ-ից MAP-ի ստացում չի անակնկալում: Նա ասաց, որ խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլու հետ մտադիր է քննարկել Եստոնիա կատարած այցի ժամանակ նրա հայտարարությունն այն մասին, որ եթե 2014 թվականին Վրաստանը չստանա ՆԱՏՕ-ին անդամակցելու գործողությունների ծրագիրը, ապա երկրի քաղաքական կայունությունը «կսասանվի», սպառնալիք կստեղծվի նաև եվրահիմնադրման տեսանկյունից: «Այդ հայտարարությունը սխալ էր, քանզի մենք ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները չենք արագացնում եւ նման կոնկրետ խնդիրներ մեր առջեւ չենք դնում: Եթե MAP-ը լինի, լավ է, եթե ոչ, ապա դա ողբերգություն չէ, մենք կշարունակենք մեր աշխատանքը»,- նշեց վարչապետը:

«Վրաստանը ցանկանում է ՆԱՏՕ-ին անդամակցելու գործողությունների ծրագիրը ստանալ 2014թ. Հյուսիսատլանտյան դաշինքի զագաթաժողովին, սակայն, եթե երկիրը չստանա այն, դա սպառնալիք չի ստեղծի եւ չի փոխի մեր եվրահիմնադրումը»,- հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: «Մեր արտաքին քաղաքականությունը չի փոխվել: Մեր կուրսն այս ուղղությամբ անփոփոխ է եվրահիմնադրում եւ ՆԱՏՕ»,- ասաց վարչապետը եւ հավելեց, որ արտաքին ուղղվածությունը չի վերանայվի: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՄՍԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԿԱՏԱՐՎԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

Հունվարի 15-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում հանդիպում ունեցավ վրաց գործարարների հետ: Շուրջ երկու ժամ շարունակվող հանդիպմանը մասնակցեց ավելի քան 80 ձեռներեց:

### ԴՐՎԵՑ ԲԱՅ ԵՎ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ԵՐԿՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

«Այսօր մեր հանդիպմանը ցանկանում են դնել կառավարության եւ բիզնես հասարակության միջեւ բաց եւ արդյունավետ երկխոսության հիմքը, ինչը կնպաստի ինչպես ձեռնարկությանը, այնպես էլ՝ մեր էկոնոմիկայի զարգացմանը: Քաջ գիտակցում են, թե որքանով նշանակալից է տնտեսա-

կան զարգացման համար մրցակցային ազատ միջավայրը, լրիվությամբ գիտակցում են այն ավանդի նշանակությունը, որ դրա զարգացման գործում պետք է ներդրվի գործարարությունը, այսինքն դուք: Մենք կառավարությունը եւ գործարարությունը համատեղ պետք է հիմնենք այն ինստիտուցիոնալ միջավայրը, որը թույլ կտա առա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԿԱՆԱԳՈՒՄ

### 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԿԱԶՄԻ 6,3 ՏՈՒԿՈՍ

Համաշխարհային բանկի կանխագծումներով 2014 թվականին Վրաստանում տնտեսական աճը կկազմի 6,3 տոկոս:



Համաշխարհային բանկը Վրաստանի համար հաստատեց նախորդ տարվա կանխագծումը, թեպետ 2015 թվականի համար ՀՆԱ-ի աճը 6 տոկոսից հասցրեց 6,3 տոկոսի: Ինչպես նշված է բանկի «2014 թվականի գլոբալ տնտեսական հեռանկարները» հետազոտության մեջ, ՀՆԱ-ի նկատմամբ առեւտրական բալանսը կբարելավվի 0,7 տոկոսով եւ, ենթադրաբար, կկազմի 7,1-7,8 տոկոս:

յաստանում՝ 5 տոկոս, Ուկրաինայում՝ 2 տոկոս:

Զգալիորեն նվազ է Թուրքիայի ցուցանիշը՝ 3,5 տոկոս, նվազ է նաև եվրոպական այնպիսի ցուցանիշը, ինչպիսիք են Բուլղարիան (1,7 տոկոս), Հունգարիան (1,7 տոկոս) եւ Ռումինիան (2,5 տոկոս): Համաշխարհային բանկի փորձագետների կանխագծումներով, այս տարի համաշխարհային էկոնոմիկան կուժեղանա, զարգացող երկրներում տնտեսական աճի տեմպերը կավելանան, իսկ այն երկրները, որտեղ շահույթները բարձր են, դուրս կգան հնգամյա համաշխարհային ճգնաժամից:

Հարկ է նշել, որ 21 երկրների թվում Վրաստանի տնտեսական աճի ցուցանիշը առաջատարների շարքում է: Այն գիջում է միայն Թուրքիան (10,1 տոկոս), Ուզբեկստանը (7 տոկոս) եւ Դոմինիկան (6,5 տոկոս):

Բանկի կանխագծումների համաձայն, Ադրբեջանում տնտեսական աճը կկազմի 5,3 տոկոս, Հա-

## ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ



Հունվարի 13-14-ին աշխատանքային այցով Թբիլիսիում էին գտնվում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ասամբլեայի համագեկուցողներ Մայքլ Յանսեն եւ Բուրիս Սիլեհչը: Այցի շրջանակներում նրանք հանդիպումներ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պատաա Ջաբարիշվիլու, խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների հետ:

Վրաստանի նախագահի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին նախագահական ընտրություն-

դարձան ներքին եւ արտաքին քաղաքականության, արդարության վերականգնման գործընթացին,

պետության կողմից ազգային փորձառնությունների պաշտպանության աջակցության, վրաց-ռուսական հարաբերություններին առնչվող հարցերին:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԳՈՐԾԱՐԻՐ

### ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Վրաստանի իշխանությունները խոստանում են 2014 թվականի համար բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

Ֆինանսների նախարարությունում հայտարարեցին, որ, 2014 թվականի բյուջեում կատարած փոփոխությունների համաձայն, մարտի 1-ից փախստականների նպաստները կհասնեն 45 լարիի,

իսկ հավաստագրված մանկավարժները կստանան ավելացված աշխատավարձ:

Ինչ վերաբերում է արդեն կատարած աշխատանքին, ապա ֆինանսների նախարարության տե-

ղեկավարությամբ, սոցիալական պայմանների բարելավման նպատակով, չորս ամիս առաջ կենսաթոշակն ավելացվել է հասցվել է 150 լարիի:

Ինչպես հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՎԵՐԱՓՈԽՎՈՒՄ Ե ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ

Երկրի գործադիր իշխանությունում իրականացվում են ռազմավարական ուղղության կառուցվածքային գործարարական փոփոխություններ, ըստ որի պետական գրասենյակը վերափոխվում է կառավարական վարչակազմի:

«Գրասենյակի վերափոխումը հիմնված է հանրային կառավարման եվրոպական մոդելի վրա: Վարչակազմը սերտորեն կհամագործակցի հասարակական կազմակերպությունների եւ արտասահմանյան փորձագետների հետ: Կստեղծվեն ու կուժեղացվեն վարչապետին առընթեր խորհուրդները: Վարչակազմը կողմնորոշված կլինի պետական կառույցների միջեւ գործառնությունների համակարգմանն ու արդյունավետ վերահսկողությանը»,- ասված է կառավարական գրասենյակի հայտարարության մեջ:

«Գրասենյակի բարեփոխումը մի կողմից առնչ-

վում է սահմանադրական այն փոփոխությունների հետ, որոնք կապված են վարչապետի իրավասու-

թյունների ավելացման հետ: Մյուս կողմից կառուցվածքային վերափոխումը պայմանավորված է բարձր արդյունավետության անհրաժեշտությամբ: Վարչապետի առաջնահերթություններն են կառավարման արդյունավետ, թափանցիկ ու հաշվետու մոդելի հիմնումը»,- ասված է հայտարարության մեջ:

Կառավարական վարչակազմի շնորհանդեսը կանցկացվի մոտ օրերս:

## ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

### ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ ՀԱՐՉԵՐԸ

Հունվարի 13-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թեմուր Շարմանաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահրամ Ավանեսյանի հետ:

Հանդիպմանը քննարկվել են Մաքսային Միությանը Հայաստանի անդամակցության եւ այս ենթատեքստում՝ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ հետագա համագործակցության հետ կապված հարցեր:



Հանդիպմանը քննարկվել են նաև Վրաստանի եւ Հայաստանի երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր, մասնավորապես, երկուստեք կարելու վել է Վրաստանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական համագործակ-

ցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստի անցկացումը, ինչպես նաև առաջիկայում կայանալիք առեւտրատնտեսական հարցերով վրաց-հայկական համատեղ աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպումը:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՄՍԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԿԱՏԱՐՎԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐԵՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վելագույնն է արդյունավետորեն յուրացնել մեր երկրի տնտեսական ներուժը, ինչը, իր հերթին, թույլ կտա հիմնել նոր աշխատատեղեր, որը վերջին հաշվով հնարավորություն կընձեռի կարգավորելու գլխավոր հիմնախնդիրը՝ աղքատության հարթահարունը: Այդ պատճառով էլ մեզ հետաքրքրում է ձեռ կարծիքն ու առաջարկությունները երկրի տնտեսական զարգացման ռազմավարության հարցում, եւ այն մասին, թե ինչն է խանգարում կոնկրետ հարցերի լուծմանը: Ցանկանում եմ ձեզ ներկայացնել նաեւ կառավարության տեսակետը»,- հանդիպման սկզբում հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

«Մենք ընկալում ենք, որ անհրաժեշտ է կատարել հերթական քայլը, որպեսզի ստեղծվի կայուն եւ երկարաժամկետ տնտեսական զարգացման հիմքը, հաշվի առնել բոլոր այն ռիսկերը, որոնց առջեւ այսօր կանգնած է Վրաստանի էկոնոմիկան: Ձեզանից յուրաքանչյուրը քաջ ծանոթ եմ այն հիմնախնդիրներին, որոնք բաժին ընկան մեր կառավարությանը՝ լրիվությամբ քաղաքական կամքին ենթարկած դատական համակարգ, դատախազություն, որը անմիջականորեն միջամտում էր գործարարությանը եւ փաստորեն կառավարում երկրի էկոնոմիկան, լրիվությամբ քաղաքականացված ոստիկանություն եւ դրա արդյունքում չպաշտպանված սեփականության իրավունք եւ տնտեսական ինստիտուտների մեղաշարժում»,- հանդիպմանը հայտարարեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլին վերլուծության ենթարկեց նոր կառավարությանը բաժին ընկած տնտեսական իրավիճակը, նշեց, որ առևտրական բացասական հաշվեկշիռը գերազանցում է 50 տոկոսը, իսկ սպառողական զանբյուրը եւ առաջին անհրաժեշտության ապրանքների 80 տոկոսը ներկրվում էին: Նոր իշխանության օրոք երկրի էկոնոմիկայում նկատված դրական տեղաշ-

արժերի մասին խոսելիս, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ 2013 թվականին առևտրի բացասական հաշվեկշիռը նախորդ տարվա համեմատությամբ նվազեցվել է 7 տոկոսով: 2012-ի համեմատությամբ 20 տոկոսով ավելացվել էր գյուղմթերքների արտահանումը:

Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ 2013 թվականի առաջին երեք եռամսյակներում ուղղակի ներդրումները կազմել են 697,3 միլիոն դոլար, ինչը 2,7 տոկոսով գերազանցում է 2012 թվականի ցուցանիշը:

«Բիժնիս Իվանիշվիլու նախաձեռնությամբ եւ վրաց ու օտարերկրյա գործարարների աջակցությամբ հիմնվեց համաերկրյան հիմնադրամ, որը սկսել է ակտիվ աշխատանքը»,- նշեց վարչապետը:

Նրա խոսքերով, 2013 թվականին Վրաստանը հաջողությամբ ավարտեց Եվրամիության հետ բանակցությունները համընդգրկուն ազատ առևտրի մասին, ինչը անհախադեպ առևտրա-տնտեսական համագործակցության ներուժ է հիմնում Վրաստանի եւ ԵՄ երկրների միջև, Վրաստանի համար բացում 500 միլիոնամոց Եվրոպական շուկան, ինչը արտակարգ նշանակություն ունի Վրաստանի էկոնոմիկայի զարգացման համար:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՂՎԱՍԹ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՐԱՑՄԱՆԸ

Գործարարության խրախուսման նպատակով Վրաստանի կառավարությունը ծրագրում է մի շարք փոփոխություններ կատարել հարկային օրենսգրքում: Այդ մասին գործարարների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:


«Մենք ծրագրում ենք մի շարք փոփոխություններ, որոնք կդրուրացնեն գոր-



ծարարությունը: Այդ առումով այս հանդիպումը արտակարգ նշանակալից էր»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, կառավարությունը առավելագույնն աջակցելու է տեղական արտադրության զարգացմանը: «Մենք խոսում ենք այն մասին, որ այսօր գործարարությունը ազատված է քաղաքական ճնշումից եւ ոչինչ չի խանգարում նրա զարգացմանը: ոսում ենք նաեւ այն արգելքների մասին, որոնք այս տարիներին գոյություն ունի Վրաստանում»,- հայտարարեց վարչապետը:

Հանրագումարելով հանդիպման արդյունքները, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ նման հանդիպումների անցկացումն անհրաժեշտ է, քանզի դա անմիջական երկխոսության հնարավորություն է ընձեռում: «Գործարարները խոսեցին կոնկրետ արգելքների մասին, թեպետ մենք նշեցինք, որ գործարարությունը լրիվությամբ ազատ է քաղաքական ճնշումից եւ ոչինչ չի խանգարում դրա զարգացմանը: Կառավարությունն ունի արտադրության զարգացման աջակցությամբ կոնկրետ ծրագիր: Մենք գտնում ենք, որ տեղական արտադրության զարգացմանը պետք է մասնակցեն բոլորը, ինչպես գործարարները, այնպես էլ կառավարությունը եւ դա չպետք է իրականացվի ներկրման ճանապարհին արհեստական արգելքների ստեղծմամբ»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:



ՈՒՎՐԱԽՆԱ ԶՆԱՅԱԾ ԲՈՂՈՔԻ, ՊԵՏՐՅՈՒՋԵՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Ուկրաինայի խորհրդարանն ընդունել է երկրի 2014 թվականի պետական բյուջեն: Փաստաթղթին հավանություն են տվել 249 խորհրդարանականներ անհրաժեշտ նվազագույն 226-ի դեպքում:

Փաստաթուղթն ընդունվել է՝ չնայած ընդդիմության կողմից Գերագույն ռադայի անբիռնի արգելափակմանը: Արդյունքում խմբակցության առաջնորդներն ստիպված են եղել կոնսուլտացիաներ անցկացնել խորհրդարանի խոսնակ Վլադիմիր Ռիբակի հետ, ինչից հետո «Բատկիվչինա» ընդդիմադիր խմբակցության պատգամավորներն արգելափակել են նաեւ Գերագույն ռադայի նախագահի կարիքները:

Նշենք, որ ավելի վաղ բյուջետային կոմիտեն հանձնարարել էր պետական բյուջեի մասին օրինագիծն ընդունել 70 միլիարդ գրիվնա (8,75 մլրդ դոլար) դեֆիցիտով:

ԱՄՆ ՄԵԿ ՏՐԻԼԻՈՆ ԴՈՒՄԻ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է

ԱՄՆ-ի Կոնգրեսում օրենսդիրները համաձայնության են եկել մինչև սեպտեմբերի 30-ը 1 տրիլիոն դոլարի չափով կառավարության ֆինանսավորման օրինագծի շուրջ: Փաստաթղթում նախատեսվում է հաշմանդամների համար զինվորական թոշակների պլանավորված կրճատման վերանայում: Օրինագիծը չի արգելափակում առողջապահության բարեփոխման իրագործումը, որը հայտնի է Obamacare խոսակցական անվանումով եւ, որը կոչված է տասնյակ միլիոնավոր ամերիկացիների ապահովել բժշկական ապահովագրմամբ:

Փաստաթղթում պլանավորված է 2014 ֆինանսական տարվա ընթացքում 45 միլիարդ դոլարով ավելացնել ազգային ու ռազմական ծրագրերի համար կատարվող ծախսերը:

ԵԳԻՊՏՈՍ ՔՎԵՆՐՎԵԼ ԵՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

Եգիպտացիների մեծամասնությունը հունվարի 14-ին եւ 15-ին կայացած ընտրություններում կողմ է քվեարկել նոր Սահմանադրությանը: Ընտրություններին մասնակցել է բնակչության 55 տոկոսից ավելին:

Սահմանադրության ընդունումից հետո նախատեսված է երկրում անցկացնել խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ: Նոր Սահմանադրության համաձայն խորհրդարանն ունենալու է մեկ պալատ: Պատգամավորների 2/3-ը կընտրվի անկախ թեկնածուներից, իսկ 1/3-ը կլինեն կուսակցության անդամներ: Երկրի ղեկավարն իրավունք ունի պատգամավորների 5 տոկոսին նշանակել իր հայեցողությամբ:

ԻՍՐԱՅԵԼ ԿԱՆԾԱՆՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐԻԵԼ ՇԱՐՈՆԸ

Ութ տարի կոմայի մեջ գտնվելուց հետո, հունվարի 11-ին, Իսրայելում 85 տարեկանում մահացել է Իսրայելի նախկին վարչապետ Արիել Շարոնը, ով համարվում էր Իսրայելի պատմության ամենահակասական կերպարներից մեկը:

2001-ից Իսրայելի վարչապետ համարվող Շարոնին 2005-ի դեկտեմբերին կաթված էր խփել: 2006 թվականի հունվարի 5-ից ավելի ուժեղ կաթվածից հետո Շարոնը կոմայի մեջ էր ընկել:

Արիել Շարոնին հուղակավորեցին հունվարի 13-ին, Նեգեւ անապատում «Շիբնիմ» ընտանեկան ֆերմայում:

Նշենք, որ Արիել Շարոնի ծնողները մինչև 1930-ական թվականներն ապրում էին Թբիլիսիում, իսկ նրա տատի ու պապի գերեզմանները մինչև այսօր գտնվում են Վրաստանի մայրաքաղաքի հրեական գերեզմանատանը:

ԳՈՐԾԱՐԻ

ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րին, 2014 թվականի առաջնահերթությունն է սոցիալական պայմանների բարելավումը: «2014-ը բոլոր հաշվարկներով կգերազանցի 2013-ի ցուցանիշները»,- ասաց նախարարը:

Անդրադառնալով լարիի կուրսի տատանումներին, ֆինանսների նախարարը հայտարարեց. «Գտնում եմ, որ լարիի կուրսը կայունացել է, ներկայումս նկատվում է դոլարի կուրսի անցնան, սակայն կանխագծ-

ված նվազում: Կարծում եմ, որ գործընթացը կկայունանա եւ այդ առումով հիմնախնդիրներ չեն լինի»: Խոսելով լարիի կուրսի տատանման եւ երկրի էկոնոմիկայի մասին, նախարարը նշեց, որ տնտեսական գործընթացները ոչ միայն չեն արգելակվի, այլ ընդհակառակը կարագացվեն:

Ֆինանսների նախարարի հավաստիացմամբ, երկրում գործազրկության մակարկվակը նվազել է: «Չնայած նրան, որ 2013 թվականին տնտեսական աճի տեմպերը նվազել էին, բիզնես հատվածում տարվա

սկզբից, երրորդ եռամսյակը ներառյալ, ստեղծվել է 30 հազար նոր աշխատատեղ: Դա նշանակում է, որ գործազրկության մակարկվակը նվազել է»,- ընդգծեց ֆինանսների նախարարը:



ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է

Վրաստանի ներքին գործերի նախարարության տեղեկատվության համաձայն, 2013 թվականի վիճակագրական տվյալներով, երկրի մասշտաբով իրավախախտումների թիվը նվազել է 25,7 տոկոսով:

ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, անցյալ տարվա համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 10036 միավորով: Ինչ վերաբերում է հանցագործությունների բացահայտման ցուցանիշին, ապա, անցյալ տարվա

համեմատությամբ, այն ավելացել է 40,9 տոկոսով եւ կազմել 59,9 տոկոս: Հրապարակվել է նաեւ առանձին վերցրած դեկտեմբերի ցուցանիշը: Ըստ նախարարության տվյալների, երկրի մասշտաբով անցյալ տարվա դեկտեմբերի

համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 1470 միավորով, ինչը կազմում է 36,9 տոկոս, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, իրավախախտումների բացահայտման ցուցանիշը ավելացել է 27,4 տոկոսով եւ կազմել 50,2 տոկոս:

Նախարարությունը հրապարակել է ինչպես երկրի մասշտաբով, այնպես էլ՝ առանձին տարածաշրջանների իրավախախտումների վիճակագրությունը: Մասնավորապես, Սամցխե-Ջավախեթիում 2013 թվականին վավերացվել է 796 իրավախախտում, որից բացահայտվել է 636-ը, ինչը կազմում է 79,9 տոկոս: Քվեմո Բարթիլում հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 1983 իրավախախտում, որից բացահայտվել է 1210-ը, բացառա մացանիշը կազմել է 61 տոկոս:



ԲԱԶՈ ԱԽԱԼԱԻԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Բաչո Ախալախային ներկայացվել են նոր մեղադրանքներ:

Ի նչպես հայտարարել է դատախազությունը, նա քրեակատարողական դեպարտամենտի ղեկավար եղած ժամանակ մեղադրվում էր բանտարկյալների նկատմամբ կտանքների եւ բռնության, ինչպես նաեւ իրավասությունների շահարկման մեջ: Խոսքը վերաբերում է Ռուսթավլիի բանտից 2006 թվականի հունվարին փախուստի՝ այսպես կոչված նախապատրաստման միջադեպին: Հետաքննությունը գտնում է, որ փախուս-

տը ձեւակաւն էր եւ այն ծրագրվել էր դեպարտամենտի ղեկավարության կողմից:

Հիշեցնենք, որ Բաչո Ախալախան դատարանի կողմից արդեն արդարացվել է երեք միջադեպերի հարցում, եւ ներկայումս հետաքննվում է 2006 թվականի բանտային բռնուտի գործը: Նույն գործով մեղադրվում է Բաչո Ախալախայի եղբայրը՝ Դաթան, որը թաքնվում է հետաքննությունից:

զուրկում, նա քրեակատարողական դեպարտամենտի ղեկավար եղած ժամանակ մեղադրվում էր բանտարկյալների նկատմամբ

Ծաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՍՏԱՊՈՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ


ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարի-բաշվիլու հետ հանդիպմանը, ընդգծվեց Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության նշանակությունը: «2013 թվականին

մենք անցկացրինք թափանցիկ եւ արդարացի նախագահական ընտրություններ: Ընդամից, վարչական ռեսուրսները չօգտագործվեցին ու այդ ընտրություններն ստացան միջազգային ճանաչում, եւ մենք մտադիր ենք առաջիկայում էլ ընթանալ ժողովրդավար-

կան ուղիով»,- հայտարարեց վարչապետը: Վարչապետը եւ Եվրախորհրդի խորհրդարանական ասամբլեայի համագեկուցողները քննարկեցին նաեւ Վրաստանում ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Երկրի զինված ուժերի ղեկավարների հետ: Հանդիպմանը ներկա էին պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, փոխնախարար Ալեքսի Բաթիաշվիլին, գլխավոր շտաբի պետ Վախթանգ Կապանաձեն, գեներալխուտի այլ ներկայացուցիչներ:

Հանդիպմանը վարչապետին ներկայացվեցին Վրաստանի զինված ուժերում ստեղծված իրավիճակը եւ 2014 թվականի համար նախատեսված ծրագրերը:

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆԶԵՎ ՏԱՐԵՎԵՐԶ ԿԱՆՑՆԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՐԱՆՈՒՐ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ



ՆԱԽԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

Առողջապահության ծրագրերի կառավարման ղեկավար Ռուսուղան Գոգուլաշվիլու հայտարարությամբ, այն անձինք, ովքեր ապահովագրվել են «Արքիմեդ» ընկերությունում, կանցնեն պետական ապահովագրության:

«Կառավարության որոշմամբ, որը առնչվում է աղքատության շեմին գտնվող բնակչության բժշկական ապահովագրությանը, ապահովագրվել էր շուրջ 800 հազար մարդ, որից 380 հազարն ապահովագրվել էր «Արքիմեդ գլոբալ Ջորջիա» ընկերության կողմից նրանից հետո, երբ վերոնշյալ ընկերությունը սննկացավ, պետական ապահովագրությամբ օգտվող քաղաքացիներն ավտոմատորեն անցան բժշկական համընդհանուր ապահովագրության

ծրագրին: Կառավարության այլ որոշմամբ, որը նախատեսում էր 0-ից մինչեւ 5 տարեկան երեխաների, կենսաթոշակառուների, ուսանողների եւ սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների ապահովագրությունը, ապահովագրական տարբեր ընկերություններում ներառել էր 800 հազար մարդ: Մինչեւ 2014 թվականի վերջը, վերոնշյալ որոշումներով ապահովագրվածները կանցնեն բժշկական համընդհանուր ապահովագրական ծրագրի»,- հայտարարեց Գոգուլաշվիլին:

ՈԼՈՐՏ

ՊԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՎՈՒՄ Է

2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունած օրենքը, ըստ որի դատավորների աշխատավարձը բարձրացվում է:

Օրենքի համաձայն, գերագույն դատարանի նախագահի աշխատավարձը 5650 լարիից հասցվում է 7000 լարիի, գերագույն դատարանի առաջին փոխնախագահի աշխատավարձը 5100-ից՝ 6500 լարիի: Գերագույն դատարանի փոխնախագահների աշխատավարձը 4800-ից՝ 6300 լարիի: 440-ից մինչեւ 6000 լարի կավելացվի գերագույն դատարանի դատավորներ-

րի աշխատավարձը: Ավելացվում է նաեւ առաջին ատյանի եւ բողոքարկման դատարանի դատավորների աշխատավարձը: Մասնավորապես, բողոքարկման դատարանի նախագահի աշխատավարձը 4200-ից՝ 5800 լարիի, տեղակալներինը՝ 3300-ից՝ 5600 լարիի, բողոքարկման դատարանի պալատի (կոլեգիայի) նախագահի աշխատավարձը 2900-ից՝ 5300

լարիի): Կրկնակապակցվել է բողոքարկման դատարանի դատավորների աշխատավարձը՝ այն հասցվել է 5000 լարիի: Քաղաքային դատարաններում նախագահների աշխատավարձը 2500-ից հասցվել է 4600 լարիի, շրջանային դատարանների կոլեգիայի նախագահների աշխատավարձը 2400-ից՝ 4300 լարիի, շաբաթային դատավորների աշխատավարձը 2300-ից՝ 4000 լարիի: Պահեստային դատավորների աշխատավարձը մնացել է անփոփոխ՝ 500 լարի:

ԿԱՆԽԱԳԾՈՒՄ

ԿԸՅ-Ը ՀԱՍՏԱՏԵՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատել է 2014 թվականի գործողության ծրագիրը: Դրանում արտացոլվել են ինչպես տեղական ընտրությունների, այնպես էլ՝ հետընտրական ժամանակահատվածի առաջնահերթությունները:



Հաջորդ տարվա ծրագիրը հիմնված է 2012-2015 թվականներին ԿԸՅ-ի ռազմավարության վրա եւ կողմնորոշված է ժողովրդավարական ընտրությունների անցկացման, շահագրգռված անձանց հետ համագործակցության, ընտրողների տեղեկատվության մակարդակի բարձրացման եւ ընտրական վարչակազմերի աշխատանքի բարելավման եւ կատարելագործման ուղղությամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողության ծրագիրը նախատեսում է գործընկերային հարաբերությունների զարգացում, ընտրող կողմերի հետ, ընթացիկ եւ ծրագրված բարեփոխումների, նախատեսված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն: Փաստաթուղթը ծառայում է նաեւ որպես ընտրական վարչակազմի բյուջեի ծրագրավորման եւ կառավարման ծրագիր, ինչը կարելի էր քաղաքացիներին արդյունավետ ընտրությունների անցկացման համար:

ԿՐԹԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՅԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՐ

Բարձրագույն ուսումնական հաստատություններին տրվում է հաստիքային ցուցակի եւ աշխատավարձի հիմնադրամի ձեւավորման ինքնուրույնություն, առանց պետական վերահսկիչ մարմնի հետ համաձայնության:

հետազոտությունների արդյունքում ստացված արտադրանքի իրացում, գիտահետազոտական եւ լաբորատոր գործունեության արդյունքում ստացված արտադրանքի արտադրություն եւ իրացում, օժանդակ բնույթի ձեռներեցական գործունեություն:

Բուհերի ինքնավարության բարձրացման նպատակով, այս եւ մյուս նորամուծություններն ընդգրկված են «Հանրային իրավունքի իրավաբանական անձի մասին», «Պետական գնումների մասին» եւ «Բարձրագույն կրթության մասին» օրենքներում ծրագրված փոփոխություններում, որոնք մշակվել են կրթության նախարարության կողմից եւ արդեն ներկայացվել

խորհրդարանի քննարկմանը: Նախագծերի համաձայն, բուհերը, որոնք ձեւակերպված են որպես հանրային իրավունքի իրավաբանական անձինք, իրավասու են դառնում իրենց կանոնադրությամբ նախատեսված դեպքերում իրականացնելու հանրակրթական եւ գիտական հետազոտություններ, իրատարակչություն, հանրակրթական եւ գիտական

Միաժամանակ, բուհերին տրվում է դյուրացված կարգով գրականության, ռեակտիվների, համակարգչային ծրագրերի, դեղորայքի, լաբորատորական սարքերի եւ տվյալների բազայի ձեռքբերման հնարավորություն:

ՆԵՐՈՒՄ

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ԿԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՆԵՐՈՒՄԸ

Կեղծված փաստաթղթերի համար քրեական պատասխանատվությունից ազատվելու մասին համաձայնագրի օրենքը շարունակվում է մնալ ուժի մեջ:

որոնք ստացվում էին կեղծ փաստաթղթերի հիման վրա:

Համաձայն օրենքի, քրեական պատասխանատվությունից ազատվում են այն անձինք, ովքեր մինչեւ 2009 թվականի հունիսի 1-ը կեղծել են անձնական վկայականը, անձնագիրը (այդ թվում՝ խորհրդական), ծննդյան վկայականը, փախստականի վկայականը եւ

այլ փաստաթղթեր: Համաձայնագրի հիման վրա տվյալ անձինք ազատվում են քրեական պատասխանատվությունից, իսկ փախստականի վկայականը կեղծելու դեպքում՝ զրկվում նաեւ անենամասյա ֆինանսական օգնությունից ու միանշանակ նպաստներից,

Որպեսզի անձինք օգտվեն համաձայնագրից, մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, պետք է դիմեն Վրաստանի արդարադատության նախարարությանը, պետական սպասարկումների զարգացման գործակալությանը, իսկ արտասահմանում՝ դիվանագիտական ներկայացուցչություններին եւ հյուպատոսա-

կան հաստատություններին: Եթե անձինք ունեն փախստականի կեղծված վկայական, դիմելու են փախստականների գործերով եւ վերաբնակեցման նախարարությանը:

Այն դեպքում, եթե անձն արդեն մեղավոր է ճանաչվել փաստաթղթի կեղծման մեջ, դատախազության եւ դատարանի որոշման հիման վրա, ազատվում է քրեական պատասխանատվությունից:

ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼ Է 13 ՀԱՋԱՐ ՄԱՆԿԱՎԱՐԾ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի արդարադատության նախարարությունն սկսել է ուսուցիչներին անձնական նոր վկայականների անվճար հանձնման ակցիա: Դեկտեմբերի 23-ին մեկնարկած եւ մինչեւ հունվարի 23-ը շարունակվելիք այդ ակցիայից, Արդարադատության տնօրին եւ սպասարկումների զարգացման գործակալության տարածաշրջանային ծառայություններին արդեն դիմել է 13 հազար մանկավարժ, որից 9 հազարը փաստաթուղթն ստացել է:

ԳՈՐԾԱՋՈՒՐԿՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՈՒՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում գործազուրկների մեծ մասը բարձրագույն կրթություն ունի: 2010-2012 թվականներին գործազուրկության կանանց թիվը ավելացել է 5,2 տոկոսով, տղամարդկանցը՝ 6,54 տոկոսով:

Վիճակագրության ծառայության տվյալներով, 2012 թվականին աշխատանք ուներ 47,4 տոկոս կին եւ 52,6 տոկոս տղամարդ: Տարիքային կատեգորիաներով տոկոսային առումով բոլորից շատ զբաղված է 55 տարեկանների խումբը: 2012 թվականին այդ կատեգորիային բաժին էր ընկնում կանանց 35 տոկոսը եւ տղամարդկանց 28,8 տոկոսը: Ձբաղվածների թիվը ամենամեծն է 15-ից մինչեւ 214 տարեկանների կատեգորիայում: Այդ կատեգորիայում յուրաքանչյուր երրորդը գործազուրկ է:

Բացի այդ, բարձր կրթությամբ կանանց 47 տոկոսը եւ տղամարդկանց 33,9 տոկոսը գործազուրկ է:

ՎՐԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԵՆՁԻՆԻՑ

ԱՆկախ պետականության ձեռքբերման տարիներից ի վեր Աղբյուրեջան առաջին անգամ դադարեցրեց սեփական հունքից ստացվող ավտոմոբիլային բենզինի արտահանումը: Ավտոբենզինը արտահանվում էր միայն Վրաստան, որտեղ վիճակագրության համաձայն, աղբյուրեջանական բենզինին փոխարինելու է ռումինականը:

Պաշտոնական տվյալներով, աղբյուրեջանական պետական նավթային ընկերությունը (SOCAR), 2013 թվականի տվյալներով, արտաքին շուկա են արտահանել 14250 տոննա ավտոմոբիլային բենզին: 2012 թվականի համեմատությամբ, երբ արտահանվել էր 60142 տոննա, արտահանման ծավալը նվազել է 76,3 տոկոսով: 2013 թվականի դեկտեմբերին, SOCAR-ը արտահանել է ընդամենը 52 տոննա ավտոմոբիլային բենզին, որը 38 անգամ զիջում է 2012 թվականի համապատասխան ժամանակահատվածի ցուցանիշը:

Նշենք, որ 2013-ին SOCAR-ը արտահանում էր դազախական հունքից պատրաստած բենզինը:

ՄԱՍԼՈ ԱՍՈՒԼԻՍ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՀԱՎԵԼՈՒՄՈՎ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

են»,- Գեղեց վարչապետը:

ինչ հանդիպումներ են մախատեսված:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՆԵ ԼԻՆԻ

Վրաստանի կառավարության դեկլարացիայի լրագրողների հետ հանդիպմանը Գեղեց, որ գործադիր իշխանությունում փոփոխություններ չեն մախատեսվում: Նրա խոսքերով, կառավարական փոփոխությունների մասին խոսակցությունները իրականությանը չեն համապատասխանում: «Նախարարների այս կաբինետը փոքրիշատե բավարարում են պահանջները, ուստի ներկա փուլում մախարարներին փոխելու մտադրություն չունենք»,- ասաց նա:

«Ինչ վերաբերում է գլխավոր դատախազին, ապա մենք մտածում ենք, կոնսուլտացիաներ ենք վարում: Ըստ օրենքի՝ մենք սահմանափակումներ չունենք: Առաջիկա օրերին ես կներկայացնեմ գլխավոր դատախազի պաշտոնի թեկնածուին»,- ասաց վարչապետը:

ՖԵՐՄԵՐՆԵՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ 205 ՄԻԼԻՈՆԱՆՈՋ ԱՍԿՅՈՒԹՅՈՒՆԻՅ

Անդրադառնալով երկրի տնտեսական իրավիճակին, վարչապետը հայտարարեց, որ մախընտրական 100 նոր ձեռնարկության դիմաց խոստումը կառավարությունը կատարել է հավելումով: Նրա խոսքերով, անցյալ տարի բացվել է 65 նոր ձեռնարկություն, եւ գործընթացը շարունակվում է:

«Շատ ֆերմերներ օգտվում են գյուղատնտեսության աջակցության ծրագրից: Խոսքը վերաբերում է 205 միլիոն լարիին: Նաեւ 200 միլիոն լարի է հատկացվել՝ որպես արտոնյալ ագրովարկ: Բացի այդ, մենք արդեն բացել ենք 65 ձեռնարկություն: Գործընթացը շարունակվում է եւ այն անընդմեջ է: Անցյալ տարի գյուղատնտեսության զարգացման համար ծախսվել է ավելի քան 1 միլիարդ 200 միլիոն լարի: Այդքան էլ կծախսվի այս տարի»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

ՏԵՂԱՎԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼԱԳԻԾԸ ԿԼԻՆԻ ՈՂ ԹԵ 30, ԱՅԼ 40 ՏՈՒՆՈՒԸ

Լրագրողների հետ հանդիպմանը վարչապետն անդրադարձավ նաեւ տեղական ինքնակառավարման առաջիկա ընտրությունների թեմային: Նրա խոսքերով, կառավարող թիմում քննարկումներ են անցկացվում անցումային արգելազօծի բարձրացման հարցով, ըստ որի Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուները հաղթահարելու են 40 տոկոսի արգելազօծը: «Մենք գտնում ենք, որ ինքնակառավարման քաղաքների քաղաքապետներն ընտրվեն ոչ թե 30, այլ՝ 40 տոկոսի արգելազօծով, ավելի ստույգ 2/5 ձայնով, ինչը արդյունքում կկազմի 40 տոկոսը, իսկ շրջաններում՝ 1/3 ձայնով, ինչը կկազմի 33 տոկոսը: Ներկայումս այդ հարցով խորհրդատվություններ են տարվում»,- հայտարարեց վարչապետը:

Վրաստանի վարչապետը Գեղեց, որ Վրաստանը ոչ միայն մտադիր է, այլև պարտավոր է Ռուսաստանին օգնություն ցուցաբերել օլիգիսկական խաղերի անցկացման ժամանակ անվտանգության ոլորտում: «Ահաբեկչության դեմ պայքարը ցանկացած նորմալ մարդու խնդիրն է, եւ մենք պատրաստ ենք այդ հարցում գործակցել բոլոր երկրների հետ»,- ընդգծեց վարչապետը: Վարչապետի հաղորդմամբ, Վրաստանի հատուկ ծառայությունները տարվա ընթացքում անվտանգության առանձնակի միջոցներ են ձեռնարկել, որպեսզի օլիգիսկային հետ հարցում բարդություններ թույլ չտան: «Մենք մվագագույնի ենք հասցրել բոլոր ռիսկերը եւ օլիգիսկային ժամանակ այդ միջոցները կխստացվեն»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԾՐԱԳՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների մախարար Դավիթ Նարմանիան ներկայացրեց 2014 թվականի համար ծրագրված մախագծերը:



Նախարարի հայտարարությանը, ընթացիկ տարվա համար ծրագրված ենթակառուցվածքային բոլոր մախագծերը կմեկնարկվեն գարնանը:

«Եթե 2013 թվականի առաջին մի քանի ամիսները մենք հատկապես մախագծերի վերականգնմանը, մրցույթների կրկնական հայտարարմանը եւ այլն, ապա 2014 թվականն այդ առումով կտարբերվի: Արդեն վաղ գարնանը կավարտվի մրցութային ընթացակարգը, եւ դեռ մախորդ տարի սկսված են ենթակառուցվածքային բոլոր մախագծերը ակտիվորեն կշարունակվեն»,- Գեղեց Նարմանիան:

Նրա խոսքերով, գլխավոր առաջնահերթություններն են ճանապարհների շինարարությունը ու ջրամատակարարման համակարգերի կարգավորումը:

«Մեզ համար գլխավոր առաջնահերթությունը ներպետական եւ միջազգային նշանակության ճանապարհների շինարարությունն է: Այդ առումով մենք աշխատանքներ կիրականացնենք տարբեր նշանակության ճանապարհների վրա: Կիրականացված են մայրուղային ճանապարհների վրա կատարվող աշխատանքները, եւ 2013 թվականին առկա երեք տարբեր հատվածների փոխարեն, շինարարությունը կիրականացվի յոթ հատվածներում, այդ թվում նաեւ Թբիլիսի-Ռուսթավի մայրուղու վրա: Գլխավոր առաջնահերթություններն են ջրամատակարարումը, որի շրջանակներում կիրականացվի Քուբայիսի, Փոթիի եւ Անակլիայի համար մախատեսված 60 միլիոնանոց մախագիծը: Լրացուցիչ 25 միլիոնանոց կիտեռներում եւ երեք ավաններում կսկսվեն աշխատանքներ ջրամատակարարման բարելավման ուղղությամբ: Դրանք կֆինանսավորվեն եվրոպական ներդրումային բանկի կողմից»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

Նախարարի խոսքերով, Վրաստանի կառավարությունը հաստատել է ընթացիկ տարվա ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար 135 միլիոն լարի հատկացնելու որոշումը:

«Տարածաշրջաններում ենթակառուցվածքային մախագծերի համար մախատեսվում է հատկացնել 135 միլիոն լարի: Ֆինանսավորումը վերաբերում է աշխատանքների առաջին փուլին: Մեզանում գործում է պետական համաձայնագրով, որը ընդարձակում է հաստատում է տեղական ինքնակառավարումներից ստացված մախագծերը եւ հատկացնում է ֆինանսավորումը: Նրանից հետո, երբ հարցը կհաստատվի կառավարության կողմից, մենք հանդես

կգանք համապատասխան հայտարարությամբ, թե ինչ մախագծեր ենք ստացել եւ, որոնք հաստատվել են տեղական ինքնակառավարման կողմից»,- ընդգծեց տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների մախարարը:

Նախարարի խոսքերով, կառավարությունը ըստ տարածաշրջանների արդեն հաստատել է ենթակառուցվածքային 430 մախագծեր, որոնք ֆինանսավորվելու են պետական բյուջեից: Մասնավորապես, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի համար հաստատվել է 49 մախագիծ, որի համար առանձնացվել է 15660072 լարի, Սամցխե-Ջավախեթի երկրամասի տարածքում իրականացվելիք 25 մախագծերի համար մախատեսվում է ծախսել 11570015 լարի:

Դավիթ Նարմանիան Գեղեց, որ մախագծերի իրականացումը տարածաշրջանային հիմնադրամի կողմից կֆինանսավորվի նաեւ երկրորդ փուլում: Ընդհանուր առմամբ, ընթացիկ տարվա համար մախատեսված մախագծերի իրականացման համար հատկացվելու է 180 միլիոն լարի:

Նրա խոսքերով, աշխատանքները կշարունակվեն նաեւ կենցաղային մնացորդների կառավարման եւ աղբանոցների կարգավորման ուղղությամբ: Անդրադառնալով տեղական ինքնակառավարման բարեփոխումների հարցին, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների մախարարը Գեղեց, որ այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Ըստ նրա, ինքնակառավարման օրենսգրքում մախագիծում սկզբունքային փոփոխություններ չեն լինի, եւ դրանք ընդունվելու են մինչեւ հունվարի վերջը:

«Խորհրդարանական աշխատացույցի համաձայն, ինքնակառավարման օրենսգրքը մինչեւ հունվարի վերջը պետք է ընդունվի երկրորդ եւ երրորդ ընթերցմամբ: Մենք առավելագույնս հաշվի առանք բոլոր դիտողությունները եւ առավելագույնս կատարելագործեցինք մախագիծը: Մենք շատ զիջումների դիմեցինք: Յանրային բանավեճեր եւ քննարկումներ չեն կարող անցկացվել, քանի որ խորհրդարանի ձեռնաչափը դաչի մախատեսում: Առանձին դիտողությունները, որոնք ներկայացվեցին մեր ընդդիմախոսների կողմից, ուղղված էին քաղաքական միավորների ստացմանը եւ, կարծում են, որ նրանցից ոմանք օրինամախագիծը չէին էլ կարողացել»,- հայտարարեց Նարմանիան:

ՄԵՆԵ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՅ ԿԱՄԱՎՄՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՆԵՆԸ, ԻՆՉՂԵՆ ՌԻՎՐԱՆԱՆ

«Չմայած սպասվելիք սադրանքներին, Ռուսաստանը չունի լծակներ պարտադրելու Վրաստանին հրաժարվել եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրումից»,- լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

«Մենք չենք կիսում այն տեսակետը, որ Վրաստանում կարող է կրկնվել Ուկրաինայի սցենարը, քանզի մենք Ռուսաստանից այնպիսի կախվածություն չունենք, ինչպես ուներ Ուկրաինան: Յետեաբար, այդ ուղղությամբ ռիսկերը նվազագույն

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿՄԱՍՆԱԿԻՅ ԴՎԱՌՍԻ ԳՎԱԾԱԾՈՂՈՎԻՆ

Խոսելով համաշխարհային տնտեսական միջավայրում Վրաստանի էկոնոմիկայի ներծուլման վերաբերյալ, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Գեղեց, որ ինքը հունվարի 22-24-ին կմասնակցի Դավոսում անցկացվող միջազգային տնտեսական գագաթաժողովին: Նրա խոսքերով, գագաթաժողովի աշխատանքի ընթացքում ծրագրված են մի շարք հանդիպումներ: «Մենք մտադիր ենք գործընկերների հետ քննարկել մի շարք ներդրումային մախագծեր եւ գործել նոր ներդրումների գերբերման ուղղությամբ»,- հայտարարեց նա, թեպետ չկոնկրետացրեց, թե Շվեյցարիայում

ՄԱՐՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՕՍԲՈՒԴԱՄԵՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Խնքագրությանը հայտնի դարձավ, որ Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուլա Նանուշվիլու որոշմամբ, օմբուդսմենի տարածաշրջանային ներկայացուցիչներին տրվեցին լրացուցիչ լիազորությունների շնորհման լիազորագրեր:

Այդ կապակցությամբ մենք կապվեցինք Վրաստանի ժողովրդական պաշտպանի՝ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային ներկայացուցիչ Արմեն Մառանգոյանի հետ եւ հետաքրքրվեցինք, այդ փաստաթուղթը, ե՞րբ է ստորագրվել եւ լրացուցիչ ի՞նչ լիազորություններ է այն վերապահում:

- Այո, նման լիազորագիր Վրաստանի ժողովրդական պաշտպանը ստորագրել է 2013 թվականի դեկտեմբերի 31-ին: Այդ փաստաթուղթով լրացուցիչ լիազորություններ շնորհվեցին նաեւ օմբուդսմենի Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային ներկայացուցչույթյանը,- հեռախոսազրույցում ասաց Արմեն Մառանգոյանը:

Նա ընդգծեց, որ լրացուցիչ լիազորությունները իրեն, որպես օմբուդսմենի տարածաշրջանային ներկայացուցչի, հնարավորություն են ընձեռնում անարգել մուտք գործելու պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմին, արտադրություն, կազմակերպություն եւ հաստատություն, այդ թվում՝ գործադիր, բանտարկության եւ արգելափակման հաստատություն, ձեռքակալության եւ ազատագրված այլ վայրեր: Իրավասությունը թույլ է տալիս պետական իշխանությունից եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, հանրային

հաստատություններից եւ պաշտոնատար անձանցից պահանջելու եւ անհավաղ կամ առնվազն տասը օրվա ընթացքում ստանալու ցանկացած անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթուղթ կամ այլ նյութը, ցանկացած պաշտոնատար անձանցից, հանրային ծառայողից պահանջելու եւ ստանալու հետաքննվող հարցի շուրջ գրավոր բացատրագիր, պետական կամ ոչ պետական հաստատությունների միջոցով անցկացնելու փորձագիտական հետազոտում եւ մշակել է եզրակացություն, փորձատուգման կամ խորհրդատվության համար հրապարակել մասնագետ-փորձագետների, ծանոթանալ քրեական, քաղաքացիական եւ վարչական գործերին, ըստ որի ընդունած որոշումներն արդեն ուժի մեջ են:

Ըստ այդ, լիազորագրի օմբուդսմենի տարածաշրջանային ներկայացուցչին իրավունք է վերապահվում նաեւ ստուգելու բանտարկության եւ արգելափակման հաստատություններում, ձերբակալության եւ ազատագրված



ման մյուս վայրերում, նաեւ՝ հոգեբուժական հաստատություններում, ծերանոցներում եւ մանկատներում մարդու իրավունքների առնչությամբ ստեղծված իրավիճակը, անձամբ հանդիպելու եւ զրուցելու ձեռքակալվածների, բանտարկյալների, կասկածյալների հետ, ստուգելու վերոնշյալ հաստատություններում նրանց գտնվելը հատուկ փաստաթղթերը: Վերոնշյալ վայրերում գտնվող անձանց պարբերական ստուգման, նաեւ կտանքի եւ բռնության մյուս դրսեւորումների, անմարդկային վերաբերմունքի կանխման նպատակով Վրաստանի ժողովրդական պաշտպանի ժողովրդական պաշտպանի հատուկ լիազորագրով օժտված անձը, առանց որեւէ ստուգման, անձամբ կամ թարգմանչի հետ իրավունք է հանդիպելու եւ զրուցելու ձեռքակալվածների, բանտարկյալների, արգելափակված այլ անձանց եւ կասկածյալների, հոգեբուժական ծառայողներին, ծերանոցներում եւ մանկատներում գտնվող անձանց, նաեւ նրանց հետ, ովքեր կարող են տեղեկատվություն հայտնել վերոնշյալ անձանց իրավունքների խախտման մասին, ստուգելու մարդկանց արգելափակումը, բանտարկությունը, հոգեբուժարանում, ծերանոցում եւ մանկատանը գտնվելը հաստատող փաստաթղթերը: «Ընդունված, վերոնշյալ անձանց հետ օմբուդսմենի տարածաշրջանային ներկայացուցչի վերոնշյալ հանդիպումներն ու զրույցները գաղտնի են, դրանց հետեւելն ու գաղտնալուծումները անթույլատրելի են: Վրաստանի ժողովրդական պաշտպանի կողմից ստորագրված լիազորագրերը տրված է մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով»,- Գեղեց օմբուդսմենի Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային ներկայացուցիչ Արմեն Մառանգոյանը:

ՅՈՒՐԻ ԽՈՐՈՒՅԱՆ

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՐԻՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ